ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

05.11.2019թ

N -212

ՀՀ Լոռու մարզպետ

պարոն Ա. Ղուկասյանին

Կից Ձեզ եմ ներկայացնում Ձորագյուղ համայնքի ղեկավարի թիվ 17-Ա , 18-Ա, 19-Ա և 20-Ա որոշումները:

Առդիր՝ 4 էջ:

Համայնքի ղեկավար Ա. Ռամազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Զորագյուղ համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 17-Ա

«30» օգոստոսի 2019 թվականի

ԶՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 21.06.21018 Թ_Ի ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 33-րդ հոդվածի 3-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Զորագյուղ համայնքի ղեկավարի 21.06.2018թ-ի <<Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման հաձնաժողով ստեղծելու մասին >> թիվ 16-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ <<Սուրեն Հարությունյան>> բառերը փոխարինել <<Արշակ Ռամազյան>> բառերով:

Համայնքի ղեկավար Ա. Ռամազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԶՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Զորագյուղ համայնք, հասցե 8-րդ փողոց, 6-րդ շենք
հեռախոս 077213407, էլ. փոստ dzoragyugh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 23» սեպտեմբերի 2019 թվականի N 18 - Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 06-066-0011-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Հարություն Ոսկանյանի կողմից ներկայացված դիմումը՝ Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.04.1991թ. թիվ 1 որոշումից քաղվածքը, 07.09.2019թ-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը (ժառանգության գործ 34/2019), Է. Ապրեսյանի <<Ինեքս >> ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60 և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

Որոշում եմ

1. ՀՀ Լոռու մարզի Զորագյուղ համայնքի կադաստրային քարտեզի՝ 06-066-0011-0003 ծածկագրի տակ գտնվող 0.06946 հա հողամասի և կիսակառույց բնակելի տան նկատմամբ օրենքի ուժով ճանաչել և վերականգնել Հարություն Սլավիկի Ոսկանյանի /ծնված 27.05.1988թ/ սեփականության իրավունքը:
2. Ճանաչել 06-066-0011-0003 հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 2001թ կառուցված 57.44 քմ կիսակառույց բնակելի տան նկատմամբ Հարություն Սլավիկի Ոսկանյանի սեփականության իրավունքը:
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինարարական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Զորագյուղ համայնք 2-րդ փողոց, 1-ին տուն:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

Համայնքի ղեկավար՝ Ա. Ռամազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագյուղ համայնք

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբեր 2019 թվականի N 19 - Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

որոշում եմ

Անհատ ձեռներեց Գերասիմ Հովսեփյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլատվություն 2019 թ-ի 4-րդ եռամսյակի համար:

Համայնքի ղեկավար Ա. Ռամազյան

գ. Ձորագյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագյուղ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ. Ձորագյուղ, dzoragyugh.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<21>> հոկտեբերի 2019 թվականի N 20-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-066-0020-0008 ԾԱԾԿԱԳՐԻ `ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՃՇՏՎԱԾ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 - Ն որոշմամբ, հիմք ընդունելով Անյուտա Պողոսյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ձորագյուղի կադաստրային քարտեզի 06-066-0020-0008 ծածկագրի `Մարուս Էվոյայանին պատկանող բնակելի տան համար հաստատել հետևյալ ճշտված փոստային հասցեն՝
ՀՀ Լոռու մարզ, գ. Ձորագյուղ, 8-րդ փողոց, տուն 14:

Համայնքի ղեկավար Ա. Ռամազյան